Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՄՆ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՈՒԽՏԱՎՈՐՆԵՐԻՆ

Օգոստոսի 17-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Վեհարանի հարկի ներքո, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսն ընդունեց ԱՄՆ հայոց Արևելյան թեմի Բոստոնի Վոթերթաունի Ս. Հակոբ եկեղեցու հիմնադրման 75-ամյակի առիթով Հայաստան կազմակերպված ուխտագնացության մասնակից 54 հայորդիների՝ ուղեկցությամբ եկեղեցու հոգևոր հովիվ Տ. Առաքել քահանա Ալջալյանի:

Արժանապատիվ Տեր Հայրը ներկայացրեց Հայրենիքում անցկացրած օրերն ու Ս. Հակոբ եկեղեցու ծխականների տպավորությունները և հանուն ամենքի իր սերն ու հարգանքը հայտնելով հանդեպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը և Ամենայն Հայոց Կաթողիկոսը՝ հայցեց Վեհափառ Հայրապետի օրհնությունն ու պատգամը ուխտավորներին:

«*...Թող Աստված ներշնչի ձեզ նոր իրականությամբ մեր երկրի՝ անկախ մեր Հայրենիքի, հոգևոր վերազարթոնքով մեր Եկեղեցու և առաջընթաց կյանքով մեր ժողովրդի, որպեսզի խանդավառ ու մխիթարված սրտով շարունակեք Հայրենիքից հեռու, բայց Հայրենիքի սերը ձեր հոգում կրելով աշխատել, տքնել ինչպես ձեր համայնքի, այնպես և Հայրենիքի ու հայրենաբնակ մեր ժողովրդի համար*»,- մաղթեց Ամենայն Հայոց Հայրապետն իր խոսքում՝ գոհունակություն հայտնելով կատարված ուխտագնացության առիթով:

Նորին Սրբությունը նաև գնահատանքով անդրադարձավ Տ. Առաքել քահանայի նախանձախնդիր և նվիրյալ ծառայությանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ